Կոռնիձոր

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 90 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1125 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Կոռնիձորը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Գյուղից քիչ հեռու գտնվում է Խորեա-Խորով գյուղատեղին: Հայագիտության մեջ այն տեսակետն է արտահայտվել, որ Պատմահայր Մովսես Խորենացին Սյունիքի ծնունդ է, որի մասին հուշում է ազգանունը: Ակադեմիկոս Ստ.Մալխասյանը գրում է. «Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքի Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստ.Օրբելյանը 13-րդ դարի վերջում»: Այս գյուղանունը փոխանցվել է Կոռնիձոր գյուղին: Ըստ Գր.Գրիգորյանի, նա իր «Պատմության հայոցը» գրել է ծննդավայրում՝ Սյունիքի Հաբանդ գավառում:
Խորենացին մահացել և թաղվել է Սյունիքում: Նրա գերեզմանոցի տեղը հայտնի չէ: Ս.Խանզադյանը «Հայրենապատումի» մեջ գրում է, որ Տեղ գյուղի բնակիչների պատմելով՝ Պատմահայրը թաղված է Սռի եղցի եկեղեցում: Այն շատ հին, փոքր, առանց արձանագրության մատուռ է, բարձր քարափի վրա, որի շրջակայքում կան հնադարյան գերեզմանոցներ:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 2417 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2277 հա, որից՝
- վարելահող՝ 1224 հա, բազմամյա տնկարկ՝ 67 հա, խոտհարք՝ 7 հա, արոտ՝ 114 հա, այլ հողատեսք՝865 հա
- բնակավայրերի հողեր՝ 63 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 14 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 20 հա,
- անտառային հողեր՝ 34 հա, որից անտառածածկ՝ 34 հա
- ջրային հողեր՝ 8 հա